Թուրքիան խոսեց տրանսկասպյան գազատարի մասին

ԱՌՎԱԿ կենտրոնի մեկնաբանությունը, 16.03.2024թ.

10.03.2024-ին հայտնի դարձավ, որ Թուրքիան պատրաստվում է մեծ ծավալներով գազ գնել Թուրքմենստանից: Թուրքիայի էներգետիկայի և բնական պաշարների նախարար Ալփարսլան Բայրաքթարը հայտարարել է, որ Անկարան դիտարկում է թուրքմենական գազի ներկրման երեք տարբերակ: Առաջինը տեղափոխումն է Իրանի տարածքով, երկրորդը՝ սվոփ փոխանակումը Իրանի և Ադրբեջանի միջոցով, և երրորդը՝ գազամատակարարումը Կասպից ծովով անցնող խողովակաշարով: Հենց այս տարբերակն էլ Բայրաքթարն անվանել է ամենաերկարաժամկետն ու կայունը:

Նախարարը նաև ընդգծել է, որ մոտ ապագայում Անկարան կգնի 2 մլրդ խորանարդ մետր թուրքմենական գազ: Սա նշանակում է, որ նշված ծավալը իրանական խողովակաշարով կհասնի Թուրքիա կամ, ավելի ճիշտ, ամբողջը կտեղափոխվի Անկարա՝ տեխնիկական առումով ամենահարմար և հեշտ իրագործվող փոխանակման սխեմայով:

Սակայն հարցն այն է, որ այս պահին Թուրքիան իրականում Թուրքմենստանից գազի մատակարարման կարիք չունի: Իրանական, լիբիական, ռուսական և ադրբեջանական գազի գնումներն ամբողջությամբ ծածկում են երկրի տնտեսական կարիքները և սոցիալական հատվածի պահանջները: Բացի այդ, Թուրքիան արդեն մշակում է սեփական գազի հանքավայրերը, որոնց պաշարները փորձագետները գնահատում են 710 մլրդ խորանարդ մետր, ինչն, ըստ փորձագետների, բավարար կլինի 30 տարվա ընթացքում Թուրքիայի բոլոր կարիքները բավարարելու համար: Եվ սա՝ «Լևիաթան» գազային հանքավայրից Միջերկրական ծովի Լևանտական ծոցից իսրայելական կապույտ վառելիքը դեպի Թուրքիա մղելու հեռանկարները չհաշված:

Հետևաբար, կարելի է ենթադրել, որ թուրքմենական գազը Թուրքիայի համար ոչ այնքան տնտեսական, որքան քաղաքական իմաստի և անհրաժեշտության խնդիր է: Անկարան, այդպիսով, պարզապես փնտրում է այս պահին Թուրքիայից քաղաքականապես և տնտեսապես ամենաանկախ միջինասիական թյուրքական մայրաքաղաք Աշխաբադը իրեն կապելու տարբերակներ: Ածխաջրածինները թուրքմենական տնտեսության ամենակարևոր հատվածն են, որի վրա, ըստ էության, հենվում է այս երկրում քաղաքական ռեժիմը: Ընդ որում, ի տարբերություն Միջին Ասիայի այլ թյուրքական պետություններից, Թուրքմենստանը դեռևս առանձնապես չի հավանում համաթյուրքական միասնության գաղափարը, և, հետևաբար, Անկարան փորձում է մոտենալ Աշխաբադին հենց գազային գործընկերության ձևաչափով, որն ապագայում պետք է վերածվի ավելի նշանակալի և մասշտաբային ինչ-որ բանի:

Գործընթացը մեկնարկել է Ռեջեփ Թայիփ Էրդողանի և Գուրբանգուլի Բերդիմուհամեդովի բանակցություններով, որոնց արդյունքում ստորագրվել են *«բնական գազի ոլորտում համագործակցության փաստաթղթեր»:* Այսպիսով, սառույցը շարժվել է, և այս պահին Անկարան ձգտում է նախադրյալներ ստեղծել Կասպից ծովի հատակով գազատար անցկացնելու համար: Հենց դա է Թուրքիայի քաղաքական նպատակը, որն իր արևմտյան դաշնակիցների հավանությամբ և աջակցությամբ փորձում է *«իրենով անել»* Կասպից ծովով Միջին Ասիայից Եվրոպա էներգետիկ հաղորդակցության նախագիծը, որին, հայտնի հանգամանքների բերումով, տասնամյակներ շարունակ հակադրվում են ՌԴ-ն և ԻԻՀ-ն: Եթե Թուրքիային հաջողվի ստանալ այդպիսի ռազմավարական էներգետիկ ուղի, դա ոչ միայն կարդարացնի Ասիայից դեպի ԵՄ հիմնական էներգետիկ զարկերակները (գազային հանգույց) «հասցնելու» և աստղաբաշխական եկամուտներ ստանալու նրա ծրագրերը, այլ նաև՝ հիմք կստեղծի Միջին Ասիայում իր քաղաքական և տնտեսական ազդեցության ավելացման հարյուրամյա երազանքի՝ «Մեծ Թուրան»-ի իրականացման ծրագրի համատեքստում:

Անհնար է հաշվի չառնել նաև այն փաստը, որ Թուրքիան վերակենդանացնում է տրանսկասպյան գազատարի մասին խոսակցությունները հենց այն ժամանակ, երբ իր օրակարգ է խցկվում Ադրբեջանի հետ, այսպես կոչված, «Զանգեզուրի միջանցքի» բացման համատեղ ծրագիրը: Եվ դա, հազիվ թե, պետք է ուղղակի պատահականություն համարել: Խոսքն, ըստ էության, Թուրքիայի կողմից ցանկալի «կասպից–զանգեզուրյան» գազային երթուղու մասին է: